

ՀԵԹՈՒՄ ՊԱՏՄԻՉ

Հեթում Պատմիչի վրայ հեռեւալ բանասիրական քննադատութիւնը կը քաղեմք Բալերմոյի Հասարակաց դրատան մէջ գտնուած ձեռագրի մը վրայոք Վիկտոր Պելլէրոյ Խոտալացի հնագիտին գրած Ճանէն, զոր տարուոյս սկիզբը հրատարակեց. յորում յետ յիշատակելու թէ ձեռք զարկեր և հետզհետէ նոյն գրատան մէջ գտնուած աշխարհագրութեան վերաբերեալ հատորոց քըննութեան, կը սկսի խօսիլ նախ Հեթմոյ ձեռագրին վրայ, որ կը կոչուի Կրտսերաց պատմութեան քանակ արևելեան աշխարհի, հեռեւալ կերպով:

Հեթմոյ պատմութիւնն չորս գիրք կը բաժնուի, և երեք զանազան մասեր ունի: Առաջին մասն՝ որ առաջին գրքին մէջ բովանդակուած է, Ասիոյ աշխարհագրութիւն մ'է. իսկ երկրորդն՝ որ երկրորդ և երրորդ գիրքը կը բովանդակէ՝ Ասիոյ պատմութիւն է, Գրիստոսի ծննդեանէն մինչև 1305. երրորդն՝ այսինքն չորրորդ գրքին մէջ՝ կը խօսի Յաղագս Անցից 'ի սուրբ Արկիթ. թէ պէտ է այս երկու վերջին մասերն սոսկ աշխարհագրական չեն, սակայն աշխարհագրական ծանօթութիւնը և կը գտնուին մէջերնին, զորս հաւաքեր եմ. սակայն առաջին մասին կարևորութիւնն անսարակոյս խիստ մեծ է:

Հեթում՝ իշխան թագաւորական զարմէ, որ հին ատենէ 'ի վեր կիլիկիա կոչուած երկրին կը տիրէին, գրեց այս պատմութիւնս: Երրոր օտարազգիք Սնուոյ և վանայ թագաւորութիւնները շնչեցին, զանի մը հայ ցեղեր, որոց կ'առաջնորդէր Ռուբէն ոմն, ապա ինեցան Տարսուի հարաւային կողմի վերայ, և հոն քաղաք տեղութիւն մը հաստատելով՝ Հայաստան կոչեցին, զոր մեր նախնիք կոչեցին Փար Հայաստան կամ Էրմինիա. որոյ Լեոն Բ. թագաւոր ճանչցուեցաւ Փրեդերիկոս Պարպարոս սայէ: Վերջին թագաւորն Լեոն Զ. մեռաւ 'ի Բարիզ 1393ին, մինչդեռ կը շրջէր յեւրոպա՝ օգնականութիւն գլու ներս՝ իւր հայրենական գահը նորէն ձեռք բերելու համար. թէպէտ և 1367ին 'ի Մէլուքեանց կործանուած էր

թագաւորութիւնն, բայց Հայք լեւնային տեղուանք ապաստանելով՝ պահեցին 'ի Սիս կէս անկախութիւն մը, ուր որ կ'ապրին դեռ առ Օսմանեան Դուռն հպատակութեամբ: Հեթում իշխանն գաղղիերէն գրեց 'ի Փուաղիէ, ուր կրօնաւորեալ էր, և 1307ին (Բէշէ կ'ըսէ 1308ին) լատիներէն թարգմանուեցաւ: Ինքն իսկ Հեթում գրքին վերջերը կը նշանակէ իւր աղբիւրները: Յարբունիս լսած էր Ասիոյ մէջ եղած զարմանալի գործերը, մասնաւորապէս ծերացեալ Հեթում թագաւորէն, որ շատ կը սիրէր չորս կողմը ժողովել իւր որդիքը և թողուէր, և անոնց պատմել այն մեծամեծ գէպերը՝ որոց ապագայ և գործակից եղած էր, և ուրիշ բաներու հետ կը պատմէր 1254ին ըրած ճանապարհորդութիւնը առ մեծ Խանն Ռարիշ աղբիւր մ'ալ Սըմբատ իշխանին քանի մը տարի առաջ 'ի Վերին Ասիա ըրած ճանապարհորդութիւնն է, և մասամբ ևս հեղինակին առանձին յատուկ կիտողութիւնք. վասն զի ինքն ալ երկրտասաներորդ գարունն վերջերը և չորեքտասաներորդին սկիզբները կարևորագոյն մասն ունեցաւ խորին Ասիոյ քաղաքական և զինուորական դիպաց մէջ:

Իրանօթ է ամենուռն այս գիրքն և շատ անգամ հրատարակեալ: Ես զձեռագիրն՝ ազգային գրատան մէջ գլու նուած՝ Գոլնիոյ 1671ին տպագրութեան հետ բաղդատեցի. տպագրութեան մէջ կը պակսի մեծ ու ընդար.

ձակ ցուցակն. խիստ շատ ալ փոփոխու-
 թիւնք կան. զոր օրինակ, Ա. գրքին
 առաջին գլխուն մէջ, յորում կաթայի
 տէրութիւնը կը ստորագրէ, և որ ձե-
 ուագրին մէկ և քառորդ երեսը բռնած
 է, 46 հատ գտայ. որոնք բնագրին ի-
 մաստը չեն փոփոխեր և բանասիրա-
 կան կարևոր յարգ մ'ալ չունին. սա-
 կայն ուրիշ ձեռագրաց հետ բազդա-
 տած ժամանակ մասնաւորապէս նշա-
 նակուելու են, մանաւանդ որ տպա-
 գրածին հետ բազդատուելով՝ ձեռա-
 գրին ճշդութիւնը աւելի կը ցուցնեն:
 Ահա հոս կը նշանակեմ՝ սխալբնա-
 գրութեան հետ վերագրութիւն ու-
 նեցողներէն զխաւորները: Չեռագրին
 մէջ թուրքաստանի մայրաքաղաքը Օկ-
 դէար կոչուած է, որ աւելի ուշիդ է՝
 քան թէ տպածին Ոկերքա: Ազախու
 ծովն տպագրածին մէջ անոյր (tenue)
 ճով գրուած է, որ նշանակութիւն մը
 չունի, մինչդեռ ձեռագրին մէջ բոտ
 մեր միջին դարու մտանադարաց սովո-
 բական գործածածին՝ Դանայ ճով կո-
 չուած է: Տպածին կանխա անունն ա-
 մենեին ձեռագրին Ռոստիա անունը չի
 նշանակեր. ձեռագրին Պայաքսէն ա-
 նունն՝ Պատաշխան անունն աւելի
 մերձ է՝ քան թէ տպածին Պայաքսէն:
 Իսպահան քաղաքն ձեռագրին մէջ
 Սպահան գրուած է, որ իմանալի է,
 բայց տպածին Սպահան բոլորովին տար-
 բերանուն է: Տպածն կ'ըսէ՝ Հայոց թա-
 գաւորութիւնն կը սկսի 'ի Միքայի՝
 քաղաքէ, զոր հասարակօրէն Երկա-
 քի Դառն կոչեն: Միքայի չէր հաս-
 կըցուեր՝ եթէ ձեռագիրն Միրապիլի
 (զարմանալի) ուղղած չըլլար, որով կը
 հասկցուի: Չեռագրին Այլարատ ա-
 նունը տպածին մէջ Արատի վերա-
 ծուեր է. ձեռագրին Սիրեզն Ֆարսիս
 տանի Շիրազ քաղաքին կը համապա-
 տասխանէ, մինչդեռ տպածին Սորա-
 կէտն չի համապատասխաներ: Էջպուրդ
 լեռն ձեռագրին մէջ Ալպուրդ ըսուած
 է, բայց տպածն Մոս Ալպուրիս կը զը-

նէ: Պաղեստինու Գաղա քաղաքն Սա-
 մարա բուռած է տպագրութեան մէջ,
 որ զընթերցողը դիւրաւ կը չփոխընէ՝
 Սամարիա մեկնելու. ձեռագիրը Գա-
 զարա կ'ըսէ, որ զայն յայտնապէս կը
 ցուցնէ. վերջը նոյն ճշգրութիւնն իւր
 դիրքէն կը յայտնուի, զիլախ եգիպ-
 տական անապատին ըսելով: Ասորիք
 ըստ տպածին կը տարածուի միևնչև 'ի
 կրակկոս արքունի շեռն, չէի հաս-
 կընար ինչ էր կրակկոսն, բայց աղէկ
 հասկըցայ ձեռագրէն, որ կ'ըսէ շարք
 (comitatum) արքունի յերիկ. այսպէս
 Հալէպ քաղաքը իմացնելու համար՝
 ձեռագիրն Ալափ կ'ըսէ, իսկ 'տպածն
 Հարայ:

Հիմայ գրքին նիւթին գանք. ստորա-
 գրուած են հոն կաթայի, Տարսայ,
 թուրքաստանի, Խորազմեայց, կոմա-
 նիոյ, Հնդկաց, Պարսից, Մարաց,
 Հայոց, Վրաց, Քաղղէսցւոց, Միջագե-
 տաց, Թուրքաց, և Ասորաց թագաւոր-
 ութիւնքն: Ինչպէս կը տեսնուի հոն
 Ասիոյ մեծ մաս մը բովանդակուած է:
 Ճարճի վրայ հաւանականաբար ակն-
 արկ մը կ'ընէ տասուերկուերորդ գըլ-
 խոյն մէջ, ուր կը պատմէ Մանգոյ
 Խանին՝ կղզիները նուաճելու համար
 ըրած փորձը, որ ձախորդութեամբ մը
 վերջացաւ: Իսկ կովկասեան աղջաց
 վրայ կոմանիոյ թագաւորութեան մէջ
 կը խօսի. և Տրապիզոնի թագաւորու-
 թեան վրայ՝ Թուրքիոյ թագաւորու-
 թիւնը ստորագրած ժամանակ: Իսկ
 իւր Հայաստանի վրայ շատ սեղեկու-
 թիւններ կու տայ այլ և այլ սեղեր,
 յորոց ոմանք շատ կարևորք են. բայց
 անոր առանձին նկարագրութիւն մը
 չ'ըներ: Ասիոյ հիւսիսային վերագոյն
 կողմանքը թողած ըլլալուն վրայ՝ չեմ
 զարմանել, վասն զի դեռ անձանթ
 էին. նոյնպէս նաև հարաւային արև-
 ելեան ներքագոյն կողմանց վրայ, որ
 կրնայ Հնդկաստանի մէջ համարուիլ.
 Բայց կը զարմանամ Արաբիոյ վրայ չը-
 խօսելուն համար, ինքն՝ որ կը ճանչ-
 նար անոր հայրենիքը, զոր և անուամբ
 իսկ Մահառնէտ կը կոչէ, որ այնչափ

1 Միքայի գրուած է 'ի տպագրութեան Ս.
 Ղազարու:

ծանօթ է իւր պէսպէս եզական յառկութեանց համար . ասոր պատճառը չկրցայ ըմբռնել : Նոյնպէս Գիպէթի վրայ բնաւ յիշատակութիւն չկայ, որոյ գիրքն Հնդկաստանի նկատմամբ միշտ անպատու կը կրօնէի, միայն թէ Տարսայ թագաւորութիւնը շատ ընդարձակելով՝ զայն մէջը շիմանայ :

Նկարագրած աէրութեանց սահմանքն ամենայն ճշդութեամբ կը դնէ, գրեթէ միշտ մէկ կամ երկու գլխաւոր քաղաքներ և իւրաքանչիւր երկրին կարեւորագոյն յատկութիւնները կը նշանակէ :

Կը փութամ՝ հոս գիրքը համառօտել համարելով թէ բոլորովին անօգուտ չէ անոնց համար՝ որ զայն առձեռն չեն գործածեր . մանաւանդ որ այն իրաց վրայ՝ որք ուրիշներէն յիշատակուած են՝ կ'աւելցընեմ՝ ուրիշ նուազ ծանօթ, նուազ հետաքրքրական, բայց երբեմն ալ ոչ նուազ պիտանիս, մասնաւորապէս աշխարհագրական տեսութեամբ :

Կը սկսի նախ խօսիլ կաթմայի թագաւորութեան վրայ, անուն մը՝ զոր մեր նախնիք Չինաստանի տուած են, անոր ամբաւ հարստութիւնքը կը յիշեցընէ, (որոյ կը վկայէ նաև ծանօթութիւն մը՝ ՚ի լուսանցան, յայտ է ՚ի Սիկիլիա գըրուած, որ բնագրին նշանադրոց նման է, Տնն, որպէս քաղաւորաշրջիւն կարայի մէջ է քան զամենայն քաղաւորաշրջիւն և ձոխազոյն քան զաշխարհ հաստիւն) : Միայն ձէթն սուղ է, զոր կը պահեն ձեռքերնին անցած ժամանակ՝ իբր զօրաւոր զեղ . ուրիշ ամէն բան զիւրազին է, կ'ըսէ : Կը նշանէ այն ազգին խորամանկութիւնը, ճարտարամտութիւնը, ատելութիւնն ընդդէմ այլոց ազգաց, մեքենական գործոց մէջ ունեցած ճարտարութիւնը, մարմնական հրահանգաց մէջ ունեցած յարմարութիւնքը . կը գրէ նաև զի՛նուորական հոգւոյն պակասութեան և մահուան վախին վրայօք, որ մարդուս չի վայլեր . պատերազմի մէջ ամենամեծ խորամանկութեամբ կը յաղթեն, ամէն տեսակ նետող և ձող զէնքեր ու-

նին . յորոց ոմանք յայլոց ազգաց զործածածէն բոլորովին տարբեր են : Չեմ գիտեր ինչ ասորմակի տէր է մեր միանձն-իշխանն, երբ կ'ըսէ՝ յոյովք գտաւիկն գեղեցիկք յոյժ՝ սւրք և կաւայք, և կը նշանակէ թէ փոքր աչքերունին և անմօրուս են : Չինաց նշանագիրը լատին տառից պէս գեղեցիկ կը գտնէ, թերևս անոնց արտաքին տեսքին և ոչ կիրառութեան նայելով . սակայն կ'երևի՝ որ ամենաքիչ հասկըցած ըլլայ . նոյնպէս նաև անոնց կրօնական կեանքը շատ լաւ չէ ճանչցած, թէպէտ և ըսածներէն ոմանք ճիշդ ըլլան . հուսկ ամենայնի կը խօսի նաև նորօրինակ համարուած թղթէ-գրամին վրայ :

Յետոյ կ'անցնի Տարսայ թագաւորութեան վրայ, զոր կը դնէ ընդ մէջ Չինաստանի և Թուրքաստանի : Բնակիչները Յուգուր կ'անուանէ, և դրիցն ալ նայելով՝ կ'իմացընեն թէ այն երկրին վրայ կը խօսի՝ զոր Դարիմ գետն կ'ոռոգանէ : Աւելորդ տեղ փնտռեցի Տարս անունը՝ եթէ ըլլայ ժամանակակից, եթէ վաղեմի և եթէ նաև վերջին ճանապարհորդաց ոմանց գրոց մէջ : Միայն Մարին Սանուտոյ իւր Գիրք գաղտնեաց հետազոտաց խաչիկն գրոց մէջ ունի . սակայն Պոնկարի համատարածին մէջ չեմ գտներ, և ոչ Լեյլեկի գծածին մէջ . սակայն Իպն-Սէիտի ճանապարհորդութեան մէջ կը գըտնեմ՝ Իակարիկու անունը, անօք՝ ուր կ'ասուի . գաւառին ինքնակալին վրայ կը խօսի, որ Պոյիշուի ապստամբութեան ժամանակ չալածուելով՝ նոյն երկրին թագաւորին քով ապաստանեցաւ : Հետեւ հոն երևեալ քաղաքներ կը գտնէ, մեծամեծ տաճարներ, տառերու մասնաւոր ձև մը, ուսմանց և արուեստից յարմարութիւն, զինուորական հոգւոյն պակասութիւն . կը գտնէ հոն ցորենի և ուրիշ ընդդիմաց առատութիւն, ընդ հակառակն զինուորական պակասութիւն . կրօնքնին կուսապատութիւն է, կ'ըսէ, ՚ի բաց առեալ քրիստոնէութեան քանի մը ծանօթութեան

թիւններէ, զորս բերին երեք Մոգերն, երբ այս երկրէն 'ի Բեթլէհէմ Յիսուսի երկրպագութեան եկեր էին: Զարմանալի է՝ որ հոս կը գնէ Մոգերուն հայրենիքը, որ սովորաբար իրանական երկիրներէն կը համարուին: Նշանաւոր է՝ որ հարաւային սահմանները Սիմ գաւառ մը կը գնէ, որ է ընդ մէջ քաղաւորութեան Հնդկաց և քաղաւորութեան կաթայի:

Յետոյ թուրքաստանի թագաւորութեան վրայ կը խօսի. երևելի քաղաք չկայ, 'ի բաց առեալ Օկզէար մայրաքաղաքը: Իսկ ընդ հակառակն ընդարձակ դաշտեր, հարուստ պոստներ կը գնէ. բնակչաց հովուական կենաց վերայ ալ կը գրէ: Գարին և ցորենն քիչ են, որիզ և կորեակ կ'ուտեն. դինի չի գտնուիր, ընդ հակառակն գարեջուր և խմորեալ ըմպելիքներ կը խմեն:

Ճշգրիտ է նաև խորագմեայց (խիվա) նկարագիրն, ուր բերրի դաշտեր և անապատներ կը գնէ. բնակչաց ահաւոր զօրութեան վրայ կը զարմանայ, որոց անունն նոր լուսած էր յառաջակողմանն Ասիա. կ'աւանդէ նաև որ հոն յունածէս քրիստոնեայք ևս կը զբաւուին:

Կոմանիոյ թագաւորութիւնն 'ի Դաւուբէ մինչև ցտէրութիւնն խորագմեայց կը տարածուի. որոյ նկարագրութիւնն ոչ միայն ուղիղ, այլ և գեղեցիկ է. կը յիշէ ընդարձակ դաշտերը, ծառահերպ բուսոց պակասութիւնը, 'ի բաց առեալ վոլկայի գետափունքը, և կամ քանի մը քաղաքաց արուարձանքը. կը յիշէ անոնց վրանաբնակ կեանքը, քակորն այրելու սովորութիւնը. կը յիշէ Սարայ մայրաքաղաքը, որ հին ատեն աղնուական և երևելի էր, կ'ըսէ, բայց հիմայ աւեր և կործան 'ի թաթարաց: Սև ծովու վրայ խօսելով՝ ևս կամ մնէ ծով կը կոչէ: Յետոյ կովկասական ժողովրդոց անխախտութեան հոգին կը նկարագրէ, և թէ ինչպէս կոմանիոյ սերութիւնն անոնց վրայ շունեցած իշխանութեամբ կը պարծէր:

Ճշգրիտ կը նկարագրէ կովկասու գիրքը ընդ մէջ Մեծ ճովուն և կասայից ճովուն, և լաւ նկարագրութիւն մ'ալ կ'ընէ կասայից ծովուն, որ յիշատակութեան արժանի է, որոյ ճիշդ գաղափարն հազիւ դար ու կէս է որ ունեցանք. հետաքրքրական են տշխարհագրական պատմութեանց մէջ այս ծովու վերայոց ուղիղ և սխալ փոխադարձ ծախսութիւնքն: Հերոդոտոս լաւագոյն գաղափար ունէր՝ քան ինչ որ իրմէ ետքի դարուց մէջ ունեցան, նաև աւելի ճշգրիտ գաղափար՝ քան ինչ որ բազումք կ'ընծայեն իրեն. որովհետև ըստ իս չկայ պատճառ մը՝ որ առանցքին շրջելը արդարացրնէ, ինչպէս որ կը գտնուի այն տախտակաց վրայ, որք Հերոդոտոսի պատմութեան համեմատ շինուած են: Երկար ժամանակ նախնի մատենագիրք Ովկիանոսի հիսսիսային ծոց մը համարեցան զայն. զարմանալի է՝ որ նոյն ինքն Պատրուկլոս Սեկեւիոյ ծովակալն՝ կասայից ծովէն նաւով Հնդկաստան ճանապարհորդելը կարելի համարած էր: Երատոսթէն, Ստրաբոն, Պեւտինկերեան տախտակն նոյն սխալը ունին, որ յետոյ միջին դարուց մէջ տարածուեցաւ: Նոյնն կը տեսնուի առ Գոզմայի, Պրիսկիանի, Փիլոստորկիոյ և տասներորդ դարու համատարածին մէջ, (որ կը պահուի 'ի Բրիտանական թանգարանին), նոյն դարու Մագրուպիոյ ձեռագրին և Աւպիի տախտակին մէջ. ժի դարու մէջ 'ի համատարածն Լամպերգոյ-Տի-Կանդի, Հէրֆորտի, Թանուլի Հիւկքետունի 1475ին Նալալարժից Տարեբաց մէջ, և ուրիշ շատ մատենագրաց մէջ, զորս զանց կ'ընեմ, քանի մը հատ նշանակելովս զսի ըլլալով. որոնք կը ցուցնեն թէ ինչպէս նոյն գաղափարն ամէն դարուց մէջ կը գտնուէր, մինչեւ մի և նոյն ժամանակ այլը՝ թէպէտ սակաւաթիւք հակառակ և ուղիղ կարծիք ունէին: Եւ որչափ առասպելք կը պատմուէին այս ծովու վրայ հեղինակիս ժամանակները. կ'ըսէին թէ յորձանք մը կար այս ծովուն մէջ, ուսկից

Ղուրն առատապէս կը բխէր, և թէ երկրաշարժ մը գոցեց զայն, և թէ տարին անգամ մը կը բարձրանայ Ղուրն, որով շատ մը մեծամեծ քաղաքներ ընկողմած էին: Եւ համարէին որ այն գետերն՝ որոնք կը թափին այս ծովը, գծօխային գետոց հետ սերտ յարաբերութիւն մ'ունին, և որուն ծովեզերքը կը գտնուէին կրկիւնը, որոնք զլմրոշխտներու համար կը պատերազմէին, և եւ միևնուայրուսի կ'ունէր զազաններ, ձիւռ կ'ունէր սրունքներով: Կար նաև հոն երկիր մը՝ որ արեւմուկնի կ'ուսարուսէր, քնակչաց մարդակերտքեան պատճառաւ. և ասոր ՚ի հաստատութիւն նորալարձից Տարնրաց աշխարհագրութեան մէջ Եսետոն մը նկարուած է՝ մարդու մը թէք կրծեւ լու գրից մէջ: Ընդհակառակն այս ամէն մարդութեանց՝ մեր հեղինակն յայտնապէս կը վկայէ թէ աշխարհիս ամենամեծ լիճն է, ամենիկն հազարդակցութիւն չունի ոչ Ովկիանոսին և ոչ ալ Յունական ծովուն հետ. պնդելով կ'ըսէ, որովհետև ուղղել կ'ուզէր այն տարածեալ և արմատացեալ սխալները: Ծովեզերեայ երկիրները արէկ կը ստորագրէ, անոր շրոց նուազ աղիութիւնը կը նշանակէ, և կը յիշէ մեծամեծ ձկնորսութիւնները:

Հնդկաստանի գալով՝ անոր բուսական զարմանալի հարստութիւնքը կը յիշեցնէ, ակունքները, մարգարիտները, ուրիշ հրաշալիքները, որոնք ընդհանրապէս ստոյգ են. բայց միշտ չափազանցութեամբ մը, որով ամէն ժամանակ խօսուեցաւ այն երկրին վերայ: Ինչպէս ամէն Միջին դարուց ուղիղ աշխարհագիրք՝ ինքն ալ կը պատմէ թէ հոն քարոզեց Ս. Թովմաս Առաքեալն, բայց կը յաւելու՝ թէ հիմայ քրիստոնեայ չի գտնուիր բնաւ: Չարմանալի է որ սովորական առասպելները չի պատմեր, անգլոսի մարդկանց (Համաւարած Պիւնթոյի) հակալից, հրէշից և ուրիշ նման առասպելաց վերայ (Չարմանալիք Հնդկաստանի. Չեռ. 2087, 955, Բ. Բատուա, Համլսթրն.

գրատ.) : Աւելի նշանաւոր են այն դիտողութիւնքն՝ զորս ինքն հաւաքած է ջանքով և օրամտութեամբ և ուղիղ գատաաւանաւ մտաց . Ինչպէս Սեբրուն վրայ Տեկքանի մէջ, ուրք անմտաբար պաշտօն տանին կոռց, Հնդկաստանի կղզիացեալ զրից վրայ, որ յովկիանուէ, յանապատաց և յանմերձեալի լեռանց պատեալ է, Գոմպահի (Կոմպպիլ) և Հերմեսի (Որմոսի) վաճառականութեան վրայ: Հոն գարի և ցորեն քիչ կը գտնուի, և բնակիչքն բրնձով, կորեկով, կաթով և կարագով կ'ապրին կ'ըսէ:

Յետոյ կ'անցնի Սեյլանի վրայ, քիչ բայց ճիշդ կը խօսի: Բնականապէս յարմարուս գալով՝ կարեորութիւն կը նուագի, որ ուրիշ աղբիւրներով համարածնով երկիր մ'է, սակայն պէտք է անոր օրքանի մը յատկութիւնները յիշեցնել:

Պարսից թագաւորութեան վրայ խօսելով, որ մինչև ՚ի Փիսոն կը տարածուի, որ է առաջին գետոց քիչեղոց յերկրաշարժի պատճառով, կը յաւելու, որպէս զտակի ՚ի Ծնեղոց Գիրս: Չարմանալի է կ'ըսեալորին այսպիսի աշխարհագրական—կրօնական երևակոյութեան մը հաւանիչն. որ և բոլոր Միջին դարու մէջ այսպէս համարուած էր՝ իբր հայրենական գաղափարաց յիշատակ. մինչդեռ Ասիոյ իշխանին ուղիղ գատողութիւնն հակառակը կը վկայէ, որ այս գետոց աղբիւրներուն քովը չէր գտած երկրաւոր դրախտը, և ոչ զոք կը ճաննար՝ որ տեսած ըլլար զայն: Այսպիսի տարակոյտ մը ուրիշ մեկնութիւն մ'ալ ունի. այսինքն՝ երբոր Հայաստանի վրայ կը խօսի՝ կ'աւանդէ թէ կը գտնուի հոն աշխարհիս ամենաբարձր Այրարատ լեռն, որոյ վրայ հանգեաւ Նոյի տապանն, և որովհետև, կ'ըսէ, գագաթան վրայ սև բան մը կը տեսնուի, մարդիկ տապանը կը կարծեն:

Իրեն նախնեաց հայրենեաց վրայ, այսինքն է Հայաստանի վրայ՝ եռանգեամբ մը կը խօսի. բայց խօսքերն ա.

մենեին հայրենասէր առաւելազանցու-
թեան հոգւոյ ցոյց չեն տար: կը նշա-
նակէ մեծամեծ լեռները, ահագին ձո-
րերը, անոյշ և աղային ձկնաշատ լիճե-
րը, զանազան ցեղերը՝ որոնք այլ և այլ
կողմեր կը բնակէին, հարուստ և մեծ
քաղաքները, բնակչաց գորութիւնը.
երկու տեսակ գիր, հաւանականաբար
երկու լեզու կը նշանակէ՝ Հայկական և
Ողուէն (Ողուան): Ողուէն անունն
(տապագիրն՝ Հայօէն)՝ միաքս ձգեց Պըտ-
ղովէոսին Մարաց Աւուրինը (Չ. Բ. 10).
կամ նոյնպէս Պտղովէոսին Միջագե-
տաց Աղուանէսը (Ե. Ը. 12) . բայց
Ողուէն անունն Աղուանից հետ ունե-
ցած համաձայնութեան գաղափարն
չատ աւելի ստոյգ կ'երևի ինձի, որ
կասպից ծովուն երկայնութեամբ բնա-
կող ժողովուրդ մ'էր, և Հայոց Բազրա-
տունի թագաւորաց հպատակ: Լե-
զուաց տարբերութիւնն կը ցուցնէ՝
որ Աղուանիք հաւանականաբար Սկիւ-
թացի պիտի ըլլան: Դարբանդայ անց-
քին Երկաթէ երևելի դռներուն վրայ
կը ճոխանայ, որոնք այնչափ անթիւ-
նիւթ մատակարարած են արևելեան
պատմութեանց և առասպելաց: Մա-
րաց թագաւորութեան վրայ քիչ կա-
րևորութիւն կայ: Վրաց թագաւորու-
թեան և Ռփխագից տէրութեան վրայ
ամենաճիշդ կը խօսի. դժբախտաբար
իրեն ժամանակին դիւրահաւանու-
թեան կը հակի, պատմելով առասպել
մը՝ իրր թէ ոմանք մատախլապատ փա-
կուած են, և այնպէս պիտի մնան մին-
չև ցվախճան աշխարհիս, և այնպիսի
պտրագաններով կը պատմէ՝ զորս զանց
կ'ընեմ:

Անք՝ ուր կը խօսի Քաղզէացւոց թա-
գաւորութեան վրայ, կը խօսի մասնա-
ւոր կերպով նաև Նինուէի վրայ. Այս
քաղաք՝ է բոյորովիսն աւերակ, այլ
այնուքիք՝ որ տակառնն Այմարին 'ի
նմին՝ մարք է հաստառոտքուսը հա-
ւատայ թէ յետ իցէ մի 'ի մեծամեծ
քաղաքաց աշխարհի: Այսպիսի ա-
մենաճիշդ նկարագիր մը, որ այսօրուան
օրս ստոյգ կ'ըլլայ, զարմանալի կ'երե-

ւի ինձ այնպիսի դարու մը մէջ՝ յո-
րում ինչ որ բաւազգիտութիւն էր,
ինչ որ չէր կրնար բացատրուիլ բա-
ցայայտ և պարզ նշանով մը՝ աշխար-
հագրաց գիտութենէն 'ի վեր էր, յո-
րում այլանդակ ժամանակագրութեան
սխալանք կը յօդուէին և կը միանային
ամենազեղեցիկ վայելչութեանց հետ,
յորում ուղիղ գալափարաց քով ամէն
օտար յիտրքներ կ'աւանդուէին. յո-
րում Բարիզու, Հոսվմայ, Վենետիոյ և
Կ. Պօլսոյ քով՝ իրր կանգուն կը դնէին
աւերեալ քաղաքները Տրոյա, Նինուէ,
Բարբելոն և առասպելեալն Առին. զար
մը՝ յորում կը պատմուէր Աղբքսան-
գրի, Ատտիլասայ, Մահմետի, Մեծ
Խանին վրայ՝ իրր ժամանակակիցք. յո-
րում կը նշանակուէին իբր աշխարհա-
գրական նիւթեր և իբր գլխաւոր կա-
րևորութիւն ունեցող բաներ՝ Նոյի տա-
պանն, Բաբելոնի աշտարակն, Երիբո-
վի դրուները, Աղբքսանդրի արձանն,
չորացեալ ծառն, Երկարուր Որախտն,
Ս. Պատրիկիոսի քակարանն, Պ. Պրան,
տանոյի կղզիք՝ ուր թռչուններն կը խօ-
սին, և այն տեղին՝ ուր ինքզինքը կա-
խեց Յուդա:

Քաղզէացւոց և Միջագետաց թա-
գաւորութեան վրայ ստոյգ նկարագիր
մը կ'ընէ. երկու լեռ կը յիշատակէ
հոն, Լիստուն՝ որ Հաւունիոս լեռը կըը-
նայ նշանակել, և Սինքար՝ որ այն
բլրոց շարքին կը համապատասխանէ՝
որք Քաբորոսի ձախակողմը կը գըտ-
նուին, և նախնեաց աշխարհագրու-
թեան մէջ Սինկարո կը կոչուէին:
Թուրքիոյ թագաւորութեան վրայ խօ-
սելով՝ ճշդութեամբ կը գծէ երեքտա-
սաներորդ դարուն կիսուն՝ Իկոնիոյ
Սուլթանին սահմանները. կը խօսի
նաև այն գաւառաց վրայ՝ որոնք կը հա-
մապատասխանեն բիւզանդական վար-
չութեան տակ եղող գաւառաց. 'ի բաց
առեալ երկու անուն, որոնք ինձի ան-
հասկնալի եղան. և այս գաւառաց վը-
րայ խօսած միջոց՝ կը խօսի նաև Տրա-
պիզոնի կայսերութեան վրայ, որոյ ան-
կախութիւնն ալ կը գրէ:

Ասորոց նահմանն է, կ'ըսէ, արևելքի կոստանդեան թեմին սահմանքն՝ Կիլիկիան ալ մէջ առնելով, յաւելլով՝ «Եյ աևդէ և աևառիկ քաղաքն Տարսուն» . կը պատմէ թէ ինչպէս Յոյնք կորսնցուցին Արարացոց ձեռքը մատնելով, և թէ ինչպէս Հայք տիրեցին անոր և հիմայ քրիստոնեայ թագաւոր մը կ'իշխէ : Յետոյ ճշգրիտ կը նկարագրէ Մարոնիներն :

Մինչև հիմայ երկար խօսեցայ՝ գիրք մը նկարագրելով, որ ծանօթ էր, և երևելի մարդիկիննրէ ծանօթութեամբ հրատարակեալ : Աւերդք աշխատութիւն մը կ'ըլլար՝ եթէ է պարզ ուրիշներէն քանի մը բան աւելի ըսել ըլլար իմ կամքս, կամ քանի մը տեղեաց մեծ կարևորութիւն մը տալ, մինչդեռ այլք կամ զանց ըրեր էին և կամ քիչ յարգ տուած էին . նոյն իսկ ձեր համբերութիւնը փորձելու բաւական պատճառ չէի համարիր զայնս . բայց այս ամէն բան աւելի կարևոր վախճանի մը պիտի ծառայեն, իբր սկիզբն գաղափարի մը՝ զոր այժմ ձեր գիմաց պիտի դնեմ :

Մինչև հիմայ ըսածներէս այս հետեւանքներն կ'ենեն . — 1. Ամենամեծ ճըշգոյթիւն՝ ժամանակին պահանջածին համեմատ . — 2. Միջնագարեան ամէն աշխարհագրաց գրոց մէջ զտնուած կրօնական ծանրատաղտուկ կերպն կամ նախնեաց սեթևեթն բնաւ չի գտնուիր մէջը . — 3. Մեծ խնամք մը՝ նկարագրելու ամէն տէրութեանց ոահմանը, երկրին ձևը, կլիմայն, բերքերը, լեզուն, բնակչաց յարմարութիւնը, կրօնքը, և այլն, որ աւելի մեր օրերուն համառօտ աշխարհագրութեան մը նըման է՝ քան թէ իւր ժամանակակից հեղինակաց ընդարձակ գործոց :

Աւելի բան մ'ալ կայ . ֆ. Բիւլպ իւր *Länder und Völkerkunde* (Պեռլին, 1846. Գ. Ա. 436) պատուական դրոց մէջ կ'ըսէ . « Մեծապէս ողբանք որ չըկայ Եւրոպացի ճանապարհորդ մը, որ ընծայած ըլլայ մեզի զԱսիա Մոնղոլաց արշաւանքէն առաջ » : Արդ ինձի կ'երևի՝ որ Հեթում, որոյ նոյն Բիւլպ մեծ

կարևորութիւն մը չի տար, իրեն և ուրիշ շատերուն խնդիրքը կատարած ըլլայ, թէպէտ և առանց բաղդատութեան ամենանուազ է քան զժանսթութիւնս Յովհաննու-Տա-Բլան-Տի-Փարրինի, Ռուխպուէզի, Մատտիուսի, Աքսելլինոյի, Մանտուիլի, Ռոլյոյի, և ուրիշ շատերուն, որոնք ծանօթացուցին մեզի զԱսիա, Մոնղոլաց տիրապետութեան ժամանակ կամ քիչ մը յետոյ . սակայն յիշելու արժանի է և լի կարևորութեամբ, որ այս՝ Ասիոյ աշխարհագրութիւն մ'է՝ ոճով զըրուած, և բուն Մոնղոլաց արշաւանքէն առաջ : Կը ցուցնէ մեզի զտեղիներ զետեղելու է ուրիշներուն առանց աշխարհագրական կարգի մը մեզի աւանդած ծանօթութիւնքը, որ հարուստ տեղեկութիւններ ունեցող ճանապարհորդի մը ստորագրութեան գրոց տեղը ծառայելու արժէքն ունի :

Այս կերպով հետեւանք հանեցի : Իսկզբանէ նախատեսած էի գործը, բայց այն կարևորութիւնը չէի տուած՝ որչափ որ հիմայ արժանի կը գտնեմ . նաև հեղինակիս աշխարհագրական դասաւորութիւնը քննելով և բաղդատելով ինձի զայն աւելի բացայայտ ընելու համար, Ասիոյ աշխարհագրական տախտակի մը վրայ դժեցի զայն Մեքքատորիի ձևագրածին ուղղութեամբ . կը խոստովանիմ՝ որ այնպիսի խառնակ բան մը դուրս ելաւ՝ որ բնաւ չհասկցայ . այնպիսի խառնակութիւն և հակասութիւնք ելան Հեթումի ըսածներուն և բուն էականին մէջ՝ որ իբր անկարելի թողուցի . և գրեթէ այն առաջին գաղափարը՝ զոր կազմեր էի, բոլորովին կը մերժէի մտքէս, այսինքն թէ մեր հեղինակն պիտի կարենայ լըրացընել շատ մը գծախտարար պակասաւոր մասունքներ : Նորէն փորձեցի Մարին Մանուտոյի՝ Գուրճք Աստուծոյ 'ի ձեռն ֆրանկաց դրոց մէջը զըրուած լուսարանեալ համատարածին վրայ, որոշ և ճիշդ դիրք ունեցողները գնելով տեղերինն . այս տախտակս ընտրեցի՝ որովհետև ժամանակաւ աւե.

լի մօտ է Հեթմոսի, այլ և ամենահաւանական է՝ որ երկու հեղինակաց մէջ գիտնական յարաբերութիւն մ'եղած ըլլայ, որովհետեւ շատ տեղ բացայայտ կ'երևի՝ որ Հայկականն՝ Վենետիկեցոյն կարևոր աղբիւր մ'եղած է:

Եղած աշխարհացոյցը բուն իւր ձևին վերածելով՝ կը համապատասխանէ Սբրինէր պատմչին Պատմական Աշխարհացոյցին վեցերորդ տախտակին, (Կոթա, 1855), որ մետասաներորդ դարէն մինչև ցերկոտասաներորդը՝ Վասիա կը ներկայացնէ՝ ճիշդ Մոնղոլաց արշաւանքէն առաջ:

Արդ պիտի ջանամ ցուցընել թէ ինչպէս, ըստ իս, իրարու համեմատ են այս երկու տախտակներն: Կաթայի թագաւորութիւնն փինջ կամ Ալդուն-խանի թագաւորութիւնն է, որ էր երկիր Քիդանաց, որոյ արևելեան և հիւսիսային սահմանն ուլկիանոսն է, Քորէան հանելով, հիւսիսայինն Պելիան անապատն է: Այս անունը միայն Սանուոյի մէջ կը գտնեմ, որ հաւանականաբար մեր հեղինակէն առած է. կը գտնեմ նաև Օրդեյլոսի մէջ, որ կ'ըսէ՝ թէ Սլըս լեռն 'ի Հեթմոյ կոչուած է Պելիան, ինչպէս նաև Հ. Գորոնելլի ատլասին մէջ՝ 133 արևել. երկ. և 45 հիւս. լայն. աստիճանին: Անէ՛ք անդին Մոնղոլաց ցեղերն կը բնակէին, (որ ճամբրիտ է), որոնք ըստ մեր հեղինակին՝ (Ա. Բ.) « անցին ընդ լեռան Բելզեան յարևմտից կուսէ »:

Կաթայի արևմտեան կողմը Տարսայ թագաւորութիւնն է: Ամէն բան կը հաւաստանէ որ Դարիմ երկրին կը համապատասխանէ սա, որոյ հիւսիսային կողմն անապատ է, անուն՝ որ խըր-խըզներէն բնակուած երկրին յարմար կու գայ: Կաթայի արևելեան կողմը՝ ըստ իմ կարծեացս՝ է Սիմ կոչուած հարաւային գաւառ մը, որ է ընդ մէջ Բագաւորոտքեան Հնդկաց և Բագաւորոտքեան Կարայից: Կը համարիմ որ Սիմ երկրին Սոնկաց թագաւորութեան համապատասխանէ, որ մետասան և երկոտասաներորդ դարերուն՝ յատուկ

Չինաստան ըսուած տեղը կը պարունակէր, այն մասը՝ որ Եանցէ-Քիան կի հարաւակողմը կ'իյնայ, ուստի և Տարսայ հարաւային-արևելեան կողմն: և զայս ոչ միայն անուան նմանութիւնն կը հաւաստէ, այլ և անոր հարստութեան և դրից նկարագիրն, որ հիմակուան տախտակաց համեմատ է, և կամ աւելի Սանուոյի վրայ շինուած տախտակաց նման է:

Տարսայ արևմտեան կողմը Թուրքաստան կ'իյնայ, որ ուղիղ է: Այս Թուրքաստանի թագաւորութիւնն սահմանակից է հիւսիսէն Խորազմեայց թագաւորութեան, արևմուտքէն Պարսից և հարաւէն Հնդկաստանի անապատին հետ: Կը համարիմ թէ Գարախիթայի թագաւորութեան վրայ ըլլայ խօսքը. մեծ դժուարութիւն չեմ քաշեր ըսելու որ թէ յարեմալաց աւելի 'ի հիւսիս քան թէ յարևմուտս են. վասն զի այս երկրներն մեծաւ մասամբ անապատ ըլլալով՝ սահմանին աւելի անորոշ կ'ըլլայ. որով նոյն Սանուոյի տախտակին վրայ աւելի հիւսիս է, Սիմի հակառակ դիրքով՝ որ հարաւային կողմը կ'իյնայ: Երկրին նախապես նկարագիրն և Օղար մայրաքաղաքն են թագրութիւնը և կը հաստատեն: Խորազմեայց թագաւորութիւնն՝ անտարակոյս խիվայի տէրութիւնն է:

Կոմանիոյ թագաւորութիւնն Կումանի, Ռուդի, Բոլովչի, և այլն, տէրութիւնն է, որ Մոնղոլաց արշաւանքէն յետոյ խըրչաք կամ Ոսկեղէն Օրուու (բունակ) կոչուեցաւ: Պայծառ կերպով նշանակուած են Վոլկայի վրայ՝ Սարայ մայրաքաղաքն (Սէրայ, Ասսաբազ), և երկրին սահմաններն:

Քիչ բան կայ հոս Հնդկաստանի թագաւորութեան վրայ խօսելու. կը համապատասխանէ այն քանի մը նախնի և միջնադարեան մատենագրաց Մեծ Հնդկաց, որոնք Փոքր Հնդկաստան ըսելով կ'իմանային ինչոս գետէն ասդին եղած կէս անապատ երկիրները, որք Կրման և Կեդրոսիա կ'ըսուէին 'ի հնումն, և հիմայ՝ Պելուհիստան

Աֆղանիստանի մաս մը, և Պարսկաստանի մաս մը, յայտնապէս մեր հեղինակն այս կ'իմանայ ամէն անգամ որ այս աշխարհագրական բացատրութիւնը հարկ կ'ըլլայ ընել: Չեմ հասկընար, եթէ ոչ է վրիպակ թէ ձեռագրին և թէ տպուածին, թէ ինչո՞ւ Պալախան գուառը՝ Հնդկաց արևելեան կողմը կը դնէ, մինչդեռ Պատաշխանն, զոր կարծես նոյն անուամբ կ'իմանայ՝ կ'իյնայ հիւսիսային արևմտեան կողմը: սակայն կարելի է նաև որ Հնդկաճննաց գուառներն մէկուն վրայ ըլլայ խօսքը, և այս դիպուածիս մէջ՝ չեմ գիտեր որոյ հետ բաղդատել:

Պարսից թագաւորութիւն ըսելով՝ կարելի է կարծել որ զՍելճուկեանցը կ'ակնարկէ: Բաժանումն կրնայ յիշեցընել թերևս Պուխտոց կամ Սաֆարիտաց երկու թագաւորութիւնը, կամ լաւ ևս՝ Մէլիք Շահին հզոր տէրութեան պառակտիլը, որուն յաջորդքն իրենց հզոր հպատակացմէ անարգուեցան: Երկու մասանց գիրքը յայտնի կերպով նշանակուած են: Արևելքէն՝ Բուխարա և Սմերզղանդ քաղաքներն, և արևմուտքէն՝ Սպահան և Նիշապուհ:

Հորմոսի պատմութեան հիմունքն ստոյգ է. Հորմոս երկրին բնակիչքն՝ Սելճուկեաններէ յողթուելով՝ թողուցին իրենց հայրենիքը, և մերձաւոր կղզոյն վրայ կանգնեցին նոր Հորմոսը, որ շատով վաճառականական յարգութեամբ մեծցաւ:

Հայաստանի թագաւորութեան չորս տէրութիւն բաժնուիլն՝ երկու բան կրնայ նշանակել. կամ Մէլիք Շահին երկրորդ որդոյն տիրապետութիւնը, որ իրեն առնելով զՍորպաստական՝ Հայաստանի վրայ իշխանական աղգեցութիւն ստացաւ, որոյ հաստատութիւն կրնայ համարուիլ Գալթէթի՝ իբրև քան զամենեսին մեծահամբաւ քաղաք յիշատակուիլն ՚ի պատմէն, և կամ՝ նաև Բագրատունեաց թագաւորութիւնը կրնայ նշանակել, որոնցմէ մէկըն Արքայ արքայից և թագաւոր Հայաստանի կոչուեցաւ, և իշխող վրա-

ստանի, Ափխազեթի, Աղուանից, և այլն: Գրքին բովանդակութենէն ինծի կ'երևի՝ որ վերջին մեկնութիւնն աւելի հուանական ըլլայ:

Մարաց թագաւորութիւնն, ըստ իս, Ֆարսի, Բիբամանի և Լարիստանի մէջ Սալկարիտաց տէրութիւնն է, որ և Սորակետ (Շիրազ), և Աւորեման (Բիրման) քաղաքներով նշանակուած է: Աքթեամ (Քուխսոն) քաղաքն՝ որ տէրութեան հարսալին սահմանն է՝ կը համոզատասխանէ Բիսան կղզոյն, մերձ ՚ի Հորմոս՝ Պարսից ծոցոյն մէջ: այս տէրութեան հիւսիսային արևմուտեան կողմը և Միջագետաց սահմանները կը բնակին կորդուք, որք անտարակոյս հիմակուան Բիւրդերն են:

Վրաց թագաւորութիւնն թէ ընդհանուր և թէ առանձին կերպով բացայայտ նշանակուած է, իբր համապատասխան վրաց վաղեմի թագաւորութեան: Ինչ որ Հեթում՝ թագաւորութիւն Գաղգէացուց կը կոչէ՝ Ապպասեանց խալիֆայութեան մնացորդն է, Իրադ-Արապիի և Խուչաստանի մէջ ամբիտուած. նաև այս տէրութեան 1258էն ՚ի վեր կործանուած ըլլալը նշանակելն՝ յայտնի ապացոյց մ'է՝ որ աշխարհագրական գրոյս հեղինակն աւարիթաց դարերուն կը վերաբերի, որովհետև հետեւեալ պատմութեան գրոյց մէջ շատ պարագաներով կը խօսի խալիֆայութեան կործանման վրայ:

Միջագետաց տէրութիւնն՝ Չէնկիտաց թագաւորութիւնն պիտի ըլլայ, քանի որ Ասորիք Էյուպեանց ձեռքը չէր անցած: Մէրսինի գառառն՝ կարծեմ Մէրսինի Օրդագեանց փոքրիկ թագաւորութիւնն պիտի ըլլայ:

Ամենաճիշդ և ընդարձակորէն կը խօսի Թուրքիոյ թագաւորութեան և Խոնիոյ Սուլթանին վրայ: Պայծառ կերպով կը նշանակէ դէպ ՚ի հարաւ Էրմինիայի (կիլիկիոյ) անկախ թագաւորութիւնը. անոր արևմտեան սահմանը Բիւզանդական կայսերութիւնը կը դնէ, և բաւական տեղ տարածութեամբ դէպ ՚ի յարիմուտս՝ Տրապիզոնի կայսերու-

թիւնը : Բիւզանդական տէրութեան զեռ ևս ընդարձակութիւնն և Տրապիզոնի տէրութեան կանպնման պատմութիւնն՝ իբր նոր գէպը մը մէջ բերեն, և զայն՝ իբրև ապստամբ դատելն Կոստանդնուպօլսոյ կայսերութենէն՝ կը ցուցնեն՝ որ այս գիրքս գէթ երեքտասներորդ դարուն առաջին կիսուն կը վերաբերի :

Հուսկ յետոյ կու գայ Ասորոց թագաւորութիւնն . յորում կը զանազանէ Դամասկոսի , Պաղեստինու , Հալեպի Անտիոքայ և Կիլիկիոյ գաւառները . վերջնոյս անկախութիւնը կը հաստատէ և կը մեծցընէ . միւս գաւառաց համար կ'ըսէ թէ ոչ միայն բուն թագաւորութիւններ են , այլ և իրենց մեծութեան համար՝ ըլլալու արժանի են : Թէ արդեօք այս խօսքերով էլուպեանց զլիսաւոր անէրութիւնը կ'ակնարկէ և կամ ուրիշ բաժանում մը՝ ես բնագրէն չկրցայ հասկընալ :

Ասիոյ պատմութեան գրոց մէջ հեղինակն շատ անգամ կը յիշէ Միջերկրականին փոստայ վրայ քաղաքներ և բերդեր , որոնք քրիստոնէից ձեռքն էին . ճշգրտեամբ կը խօսի նաև Մառնիտներուն վրայ :

Իմ կարծիքս ըսի և ջանացի դտածս զօրաւոր և կարևոր փաստերով հաստատել , ինձի կ'երևի՝ որ ըստ ընդհանուրին՝ վախճանիս հասայ , իսկ ըստ մասնաւորին՝ կան քանի մը գժուարութիւնք և չիօթութիւնք . այսպէս , օրինակ իմն ժամանակի մը քաղաքական բաժանմունքն ուրիշ մերձաւոր ժամանակի հետ չիօթած են , ամենադիւրին չիօթութիւն մը՝ որ կրնայ յառաջ գալ այն ատենուան Ասիոյ վրայ տիրապետողաց կամ արշաւողաց՝ Ֆաթիմեանց , Որդաբեանց , Խարիզմեայց , Սելճուգեանց , և ուրիշ հարիւրաւոր ցեղից և աղանդներու շարունակ յեղափո-

խութենէ : Յայտնի է՝ որ երբեմն տեղ տեղ նաև հարկ կ'ըլլայ մեկնաբանել ազատօրէն , քանի մը վկայութիւններ յարմարցընելու համար . շատ պակասութիւնք և շատ դատարկութիւնք կը գտնուին , 'ի բաց առեալ վերը յիշատակուածներէն՝ Հնդկածենաց , Սիպերիոյ , Արաբիոյ վրայօք : Հաւանական է՝ որ իւր գրոց մէջ զՅիպէզ բնաւ չի նշանակիր , սակայն ամէն ըսածներուն նայելով՝ ինձի կ'երևի՝ որ հետեցընելու է թէ Հիթմոյ առաջին գիրքն՝ Մոնղոլաց արշաւանքէն յառաջ՝ ոճով նկարագիր մ'է Ասիոյ , որ իրեն պատմութեան իբր յառաջաբան կը ծառայէ , նշանելով այս արշաւանաց տեղերը :

Այսպիսի գրքին վրայօք . իսկ ձեռագիրն՝ բաց 'ի զանազան յարգերէ՝ ունի նաև ամենամեծ նոյնութիւն՝ Գուրնիոյ մէջ եղած տպագրին հետ , և թէ շատ հաւանական է՝ որ մատենագրին ժամանակակից եղած ըլլայ : Եւ այս ինձի հաւանական կ'երևի , զի մատենին վերջը աւելցուած են Երզր Հայկականք , տող առ տող իտալական գրերով և թարգմանութեամբ : Հ . Ղևոնդ Ա լիչան վարդապետն , առ որ ուղարկեցի հայկական գրուածին օրինակ մը , իրեն սեփական ազնուութեամբն՝ որոյ համար լիուլի շնորհապարտ եմ իրեն , քննեց զայն , և գրեց առ իս՝ որ յիրաւի հայերէն է այն , բայց շատ գժուարութիւններ կ'ընծայէ թարգմանուլ՝ քանի մ'անճշտութեանց պատճառու . պատճառք՝ որք թերևս նոյն լեզուին վրայօք իմ անհմտութենէս առաջ եկած ըլլան , (թէպէտ և ամէն ջանք 'ի գործ գրած եմ՝ ճիշդ գծելու տառերուն ձևերը) , և կամ քանի մը աւերուած և քերթուած տեղերէ , և մանաւանդ ամենադժուար ձեռնարկէս՝ իտալական 24 տառերու ձեռքով՝ հայկական 38 տառերը բացատրելու :

